ռանձին խնամքով այն հավաքել ջրով լի դույլի մեջ։ Ֆոսֆորի
այրման տեղը պետք ե խնամքով քերել կացնի, դանակի կամ
դուրի միջոցով։ Ֆոսֆորի դույլից ջուրը պետք ե թափել փո-
սի մեջ և փոսը հողով ծածկել, իսկ մնացածն այրել յերկաթա-
թիթեղի վրա, բակում, չենքերից հեռու։

V. ՀՐՁԻԳ ՌՈՒՄԲԵՐԻ Ս.Ռ.Ջ.Ջ.Ց ՀՐԴԵՀՆԵՐԸ ՅԵՎ ԳԱ.Յ.ԲՈ.Մ.ԲԼ ԵՐԱ.ՆՑ ԴԵՄ

Իմում են գեպքեր, յերբ հրձիդ ուումբերը նպաստալոր
պայմանների շնորհիվ (տանիքածածկերի անսպետքանալը և այլն)՝
կարող են հրդեհ առաջացնել։ Այդ գեպքում հրչեծ ողակի մար-
տիկներին՝ վիճակվում ե միաժամանակ հանդցնել և՝ հրձիդ
ուումբը, և՝ նրանից առաջացած հրդեհը։

Բնակելի տան շենքում հրձիդ ուումբի թափանցելու աստի-
ճանը գլխավորապես կախում ունի յերեք ֆակտորից. ուումբե-
րի քաշից, ոմքակօծման բարձրությունից և այն բանից, թե
ինչ նյութից ե կառուցված տունը։ Նշանակություն ունեն նաև
կտրի ձեւը և շինանյութը։ Վերջինիս վրա մենք կանգ չենք առ-
նի, քանի վոր տների մեծ մասն ունի այնպիսի տանիքներ, վո-
րոնք հարմարեցված չեն ուումբերի հարվածները թուլացնելու
համար։ Քննենք առաջին յերեք ֆակտորները։

Փոքր քաշ ունեցող (1—2—5 կգ) ուումբերը, ծակելով կտու-


րը, ընկնում են տանիքածածկերի վրա, կամ խրվում նրանց
մեջ։ Ավելի խոշոր ուումբերը—10, 25 և 50 կգ քաշով, ծակեցով՝
կտուրն ու տանիքածածկը, ընկնում են չենքի միջածածկի կամ
հարկերի հատակի վրա (վովում են հատակի մեջ)։

Յերեկ ժամանակ, լավ սպառազինված և կազմակերպված
ավիագենիթային պաշտպանության կողմից զիմադրություն մե-
նելու դեպքում, ոմքակօծությունը սովորաբար կատարվում է
4000—7000 մ բարձրությունից, իսկ դեւեր ժամանակ՝ 2000 մ
և ավելի պակաս բարձրությունից։ Ավելի պակաս բարձրու-
թյուններից ոմքակօծելու նպատակն ե՝ ավելի հետարկությամբ
հարվածել նշանակետը։

Այսպիսով, այն բարձրությունը, վորից ընկնելու յեն հրձիդ
ուումբեր, կարող ե խիստ տարբեր լինել։ Հետեւաբար, չենքի
մեջ ուումբերի թափանցման աստիճանն ել տարբեր կիմի։

Ինքնըստինքան հասկանալի յե, վոր նույնիսկ դդալի բարձ-
րությունից (4000—7000 մ) փոքր քաշ ունեցող ուումբեր ցած-
նետելիս տան ամենախոցելի տեղերը տանիքածածկերն են և նը-
րանց հարակից հարկերը։

Եերկայում քանի գնում¹⁾ ավելի պարզորոշ ե դառնում
փոքր քաշ ունեցող ուումբեր գործադրելու տենդենցիան։ Այդ
հնարավորությունն ե տակիս հրդեհը տարածելու հորիզոնական



ուղղությամբ — մի տան կտրից դեպի հարևան տների կտուրները, վորպիսին անպայման ամենավտանգավորն է հանդիսանում։ կարծ ժամանակում կրակն ընդդրկում է չենքերի դրալի տարածություն (նկ. 10)։

Բացի դրանից, փոքր քաշի ոռոմբեր գործածելը պայմանավորված է նաև մի այլ նկատառումներով։ մեծ քանակությամբ փոքր ոռոմբեր նետելիս հաջողվում է ստեղծել հրդեհի մեծ քլով ոզախներ։ Ճիշտ է, վոր այս ոզախներն սկզբնական շրջանում աննշան են լինում, բայց բազմաթիվ լինելու դեպքում նրանք կարող են մեծ հրդեհի պատճառ դառնալ, վորովհետեւ դրանք բոլորն ել միանգամից հանգնելն այնքան ել հեշտ չե։

Ֆրանսիական «Պարի Սուրար» ուսեակցիոն թերթի թղթակից լուի Դելապրեն¹ իր գրքում այսպես ե նկարագրում հրձիդ ոռոմբերի մասսայական կիրառումից առաջցած քայլքայումների պատկերը։

«Կարկտի նման թափվում են ոռոմբերը կորտեսների հրապարակի, Արտոչա կայարանի և Լեոն փողոցի միջև ընկած ամբողջ թաղամասի վրա։ Սուրբ Ավգուստինի փողոցի վրա այրվում է մի տուն, վորը վերեկց ներքեւ փորված է արկով, ինչպես գութանով փորված հող։ կրակը նետվում է դեպի դիմացի տունը։

Կրակի ողակը միծառքանչ դանդաղեցողությամբ միակը վում է Գրան Վիայի շուրջը։ Յերեքում է, թե ինչուս են այրվում տները տանիքից, թե ինչպես են վառվում նրանք միջև ամենաներքեւի մասը և ծանրորեն փուլ են զալիս կայծերի ու կրակի լեզուների մբրիկում։ Մի քանից մնում են չորս կողմից այրված չարագուշակ կմախք, վորը լիզում են երենց գործը շարունակող կրակի ցոլքերը։

Հրշեներն ի վիճակի չեն հանգնելու այդ հազարավոր խորոյները։

Հրձիդ ոռոմբն ընկնում է Փրանսիական դեսպանատան կըտուրի վրա, Վիլյալար փողոցում։ բարեբախտաբար հաջողվում է կրակը ժամանակին հանգնել։ Սակայն ընծակա բոլոր տները ջահերի նման բոցավառվում են։ Առաջոտյան ժամը հինգին փողոցը դեռ ևս հրդեհների բոցերի մեջ է։

Իհարկե, մեծ քանակությամբ նետելիս բոլոր հրձիդ ոռոմբերն ել չենքերի (տների, ձեռնարկությունների, պահեստների և այլնի) վրա չեն ընկնում։ Վնասի աստիճանը կախված է

բնակավայրի չենքերի խառնթյունից։ Փողոցն ինչքան նեղ է, աներն այնքան ավելի մոտ են դասավորված իրար, հրապարակներն ինչքան ավելի փոքր են, պարզ են, վոր այնքան ավելի մեծ թվով ավելառութեր են դիպչում նպատակակետին։

Իրենց պարունակությամբ տարբեր հրձիդ ոռոմբերի ներգործության աստիճանը չենքի մասերի վրա՝ կախում ունի մը շարք պատճառներից։ Կանգ առնենք դրանցից ամենաբնորոշների վրա։

Վերցնենք, որինակ, մի տանիքածածկի տակը, վորը լցված է զանազան հնոտիներով (աթոռներ, բազմոցներ, թուղթ, լաթեր և այլն) և ունի բազմաթիվ միջնորմներ— պատեր և տանիքային խորթանոցներ։ Այսպիսի տանիքածածկն առանձնապես վտանգավոր է հրդեհի տեսակետից։ Հրձիդ ոռոմբը, ծակելով կոռուրը և խրվելով տանիքածածկի մեջ, առաջ և բերում հետեւյալը։

Յոսփորային ոռոմբը, վորը նախատեսված է դյուբավառ նյութերը հրկիղելու համար, մի ակնթարթում կրցավառի տանիքածածկի զանազան տեղերում և առաջ կրերի չենքի լիակատար ծխակալում։ Կարծ ժամանակից հետո հրդեհն սպառնալից չափերի կհասնի։ Դրա դեմ պայքարելը չափեց ավելի բարդ և դժվար կլինի, վորին, ի միջի այլոց, զգալի չափով կնպաստի չենքի խիստ ծխակալված լինելը։

Ելեկտրանալ-տերմիտային ոռոմբը, վորը նախատեսված է լինում հրկիղելու դյուրավառ նյութերը և փայտեղնի հարթմակերեսները, հրդեհ կառաջացնի այնտեղ, ուր խրվել է նա։ Դրա հետ միասին, նրա չաղ տված հալած մետաղի կաթիլները կարող են հրդեհի բազմաթիվ մանր ոչախներ ստեղծել տանիքածածկի զանազան տեղերում, ընկնելու տեղից 3—4 մ շառավղի վրա։

Կենտրոնացրած գրծովության տերմիտային ոռոմբը, վորն ունի ճիշտ նույն նպատակը, ինչ վոր ելեկտրոնա-տերմիտայինը, բայց ընդունակ է հրկիղելու փայտե ծածկը, իր ընկած տեղում կառաջացնի ավելի ուժեղ հարված, քան ելեկտրոնա-տերմիտային ոռոմբը։ Հարվածի տեղում համարյա վայրկենապես կվառմի անային կահ-կարասիքը։ Համենայն դեպս այսպես կը լինի 50 կգ քաշ ունեցող ոռոմբի ներդրությունը, վորի վառելանյութի պաշարը բավական մեծ է։

Հրդեհի գոտին ընդարձակելու տեսակետից առանձնապես

¹ Լուի Դելապլե, Հերսոնական Մագրիդ, Սոցեկլիք 1936 թ.։

վտանդավոր են այս ռումբի գործողության առաջին բոպեները, յերբ նրա հալված անցքերից, դպալի ճնշման ներքո, տեղի կունենա չակի և տերմիտային յերկաթի «Հատրվանում», վորոնք ունեն 1500—1600^o Ց ջերմություն և ընդունակ են առաջացնելու հրդեհի բազմաթիվ մանր ոջախներ։ Հետաղայում, յերբ տերմիտի այրումը կսաստկանա, կսկսվի այրման պրոցուկտների արտահոսում։ Հոսելով ծածկի միջով, նրանք կվառեն հնոտիները, կրցավառեն և կայրեն ծածկը, ստեղծելով թաքուն հրդեհ, ինչպես նաև անմիջականորեն ծածկի տակ դժուվող շենքը հրդեհելու վտանդ։

Յրվող գործողության տերմիտային ռումբը, վորի նպատակն եւ ստեղծել հրդեհի բազմաթիվ և մանր առանձին ոջախներ, պայմիտունի ուժով մասամբ քարուքանդ կանի տանիքը և միջնորմները. դրա հետևանքով կուժեղանա ողի հոսանքը, հետեարար և հրդեհը։ Ռումբի յուրաքանչյուր տերմիտային սեղմենտը վերջին հաշվով կհասցնի հենց նույն վնասը, ինչ վոր կենտրոնացրած գործողության փոքրաքաշ տերմիտային ռումբը։

Համակցված ռումբը, վորը բաղկացած և տերմիտից և խտացրած վառելանյութից, վորի նպատակն եւ հրկիվել թե՛ դըմվարությամբ վառվող և թե՛ դյուրավառ նյութերը, արագությամբ առաջ կրերի հնոտիների և ամբողջ տանիքածածկի ուժեղ բոցավում։ Կրակի ներդործությանն առանձնապես կենթարկվեն կտուրի տախտակածածկը և ծպեղները, այնպես վոր տանիքի փուլ գալու վտանդն անխուսափելի կլինի։

Ահա թե ինչո՞ւ տանիքածածկերի տակը հնոտիներից մաքրելը, հակահրդեհային միջոցառումների կիրառումը վերին առտիճանի կարելոր գործ են հանդիսանում։

Կարդի բերված և մաքրված տանիքաշները ռումբից կինասվի աննշան չափով, մանավանդ յեթե անմիջապես միջոցներ ձեռք առնվեն՝ ռումբը հանդցնելու կամ հեռացնելու համար։

Այս պայմաններում ֆոսֆորային ռումբը միայն կիանձի փայտեղնը և ֆոսֆորով կտողորի միայն այն տեղերը, վորտեղ նա այրվել է։ Տվյալ դեպքում հրդեհի ծաղումը 5—10 րոպեյով կրանդաղի, իսկ այդ բավական ե՞ Փոսֆորը հանդցնելու և դրանով իսկ հրդեհը կանխելու համար։

Այս պայմաններում, այսինքն այն տանիքածածկում, վոր տեղ գործադրվել են հակահրդեհային կանխարդելիք միջոցառումներ, ելեկտրոնա-տերմիտային ռումբը կրակ կառաջացնի, այն ել հազվի 3—5 րոպե հետո, այնտեղ, վորտեղ այրվել ե նրա

հիմնական զանգվածը։ Ռումբի նետած՝ ելեկտրոնի հրավառ մասնիկները միմիայն թեթևակի խանձում են փայտեղնը։

Արդարեւ, հրավառ հալած ելեկտրոնը կարող է ներհոսել ծածկի ճեղքերից և առաջացնել թաքուն հրդեհ, վորի մասին չի կարելի մոռանալ։

Կենտրոնացրած գործողության տերմիտային ռումբը «Հատրվանելիս» այստեղ նույնպես մեծ վտանդ չի ներկայացնի։ Վտանգավոր կլինի նրա այրման յերկորդ փուլը, յերբ կսկսվի տերմիտային նյութի այրումը (ռումբի մարմնի հալելուց հետո)։ Այն վերնածածկը, վոր պաշտպանված չե ավագի շերտով և այլ նյութերով, կայրվի և նրա տակ անպայման թաքուն հրդեհ կծագի։

Յեթե վերնածածկը ծակվի և ռումբը խրվի այնտեղ, ապա կառաջանա վոչ միայն հրդեհի լուրջ վտանդ, մարտիկի աչքից թաքուն, այլև տանիքածածկի տակ դտնվող շենքի կահավորանքի բոցավառում, մանավանդ յեթե այդ լինի բնակելի շենք։

Յրվող գործողության տերմիտային ռումբը նույն արդյունքը. կտա, ինչ վոր կենտրոնացրած դործողության փոքրաքաշ ռումբը։ Տերմիտային սեղմենտներն առանձնապես զգալի վնաս չեն առաջացնի։

Այսպիսի ռումբը հանդցնելուց հետո անհրաժեշտ է ինամբ քով ստուգել ամբողջ շենքը, վորտվածեա հնարավոր և, վոր հրդեհի թաքուն ոջախ գոյություն ունենա։

Ինչպես արդեն ասել ենք, հրդիգ ռումբը վտանգավոր և գլխավորապես այն վայրի համար, վորտեղ նա առատ մնունդ և դտնում կրակի համար։ Այս տեսակետից խիստ վտանգավոր են տների բնակելի սենյակները։ Դյուրավառ գործվածքները (հաղովատեղեն, սփոցներ, մահակաների արդուղարդ և այլն) բավական հարուստ սուունդ են հանդիսանում կրակի համար, ինչպես և տնային գանազան կահույքները։

Ֆոսֆորային ռումբը, ընկնելով բնակելի սենյակը, այստեղ ևս, ինչպես հնոտիներով լեցուն տանիքածածկում, առաջ և բերում կահակարասիքի արագ բոցավառում։

Ելեկտրոնա-տերմիտային ռումբը ելեկտրոնի հրավառ մասնիկներ նետելու պահին առանձնապես վտանգավոր ե գործվածքների և թղթի (պաստառների) համար։ Իսկ փայտի համար վտանգավոր ե ռումբի իրանի վառվելը։

Կենտրոնացրած գործողության տերմիտային ռումբը վտան-

գալոր ե իր այրման բոլոր ստաղիաներում։ Այրման պրոդուկտների «շատրվաներու» դեպքում մոտիկ գտնվող տնային այն պիտույքները, վորոնք իրենց վրա ունեն դործվածքներ (բազմոցներ, անկողին և այլն), արագ բոցավառում են։ Հոսող հրահեղուկը և յերկաթն իրենց հերթին կարող են այրել հատակը, հրդեհի թաքուն ոջախ և նույնիսկ հրդեհ առաջացնելով ստորին հարկում։

Ցրվագ գործողության տերմինային ոռումքը ստեղծում է հրդեհի մանր ոջախների մի ամբողջ շարք, վորոնք կարող են միանալ և կրակով շրջապատել ամբողջ սենյակը։

Այս բոլորից պարզ ե, վոր ավելորդ դործվածքները (վարագույրներ և այլն) «սպառնալից դրության» ժամանակ պետք է հալարվեն պահարաններում։ Այդ անհրաժեշտ միջոցառում ե առանձնապես այն բնակարանների համար, վորոնք անմիջականորեն դուռփում են տանիքածածկից ներքեւ։

Պակաս խոցելի չեն բնակելի տների փայտե սանդուխքները։ Վառվելով, նրանք կարող են կտրել տան վերելի հարկերում ապրողների եվակուացիայի ճանապարհը։

Սանդխավանդակներում ֆոսֆորային ոռումքը կարող է քարուքանդ անել սանդուխները և ծխապատել չենքը, իսկ ելեկտրոնա-թերմիտային ոռումքը կհրդեհի սանդուխի աստիճանները և ճաղերը, կենտրոնացրած դործողության տերմիտային ոռումքը կարող է կրակով արագ լամփել սանդուխի յերկու-յերեք մետրանոց գոտի (իր ընկնելու տեղից հետո), ցրվող դործողության տերմիտային ոռումքը, մի կողմից կարող է մասնակի քանդել սանդխավանդակը, իսկ մյուս կողմից՝ հրդեհի առանձին ոջախներ առաջացնել սանդխավանդակի զանազան տեղերում։

Այսպիսով, հրդեհաշեջ ողակի մարտիկներին վիճակվում և այստեղ հանգցնել վոչ միայն հրդեհի աղբյուրները, այլ նաև հենց հրդեհը։

Յուրաքանչյուր հրձիգ ոռումք կարող է հրդեհ առաջացնել։ Դրանցից մի քանիսը հրդեհն առաջացնում են դանդաղ, իսկ մի քանիսը՝ արագ։ Այդ իսկ պատճառով հրշեջ ողակն ամբողջովին վերցրած, իսկ հրդեհաշեջ պոստի մարտիկները մասնավորապես, պետք է շարունակ պատրաստ լինեն հանգցնելու վոչ միայն ոռումքերը, այլև հրդեհի սովորական ոջախը։

Ցեղ ոռումքն ընկնում է չենքի այս կամ այն մասի վրա,

ամենից առաջ հարկավոր է վորոշել հրդեհի հնարանվոր դարձացման վտանգը։

Հրդեհն ամեն տեղ միատեսակ չի զարգանում։ Դրա համար ել կրակը հանդցնելու միջոցները հրդեհաշեջ պոստերին բաշխվում են՝ համաձայն նրանց պաշտպանության յենթակա բնակելի տան տեղամասերի հրդեհավտանդության աստիճանի։ Ամենառուժեղ պոստերը պետք է լինեն տանիքածածկի դռան մոտ և նրան հարակից առաջին հարկում։

Ցեթե տանիքում անց են կացվել հակահրդեհային կանխարգելիք միջոցներ, ապա պետք է համարել, վոր տանիքի հրշեջ պոստը լիովին կարող է վարվել փոքրաքաշ ուստիքերի հետ։ Փոքր լինչ ավելի բարդ են սանդխավանդակում դանդող պոստերի խնդիրները։ Մասնավորապես վերին հարկի սանդխավանդակի հարթակի վրա գտնվող պոստը պետք է վոչ միայն հանգցնի վերին հարկի բնակարաններում ծաղած հրդեհը, այլև կարիքի դեպքում պետք է անհապաղ ոգնություն ցույց տա տանիքի պոստին։

Համենայն դեպս, տան այս կամ այն տեղամասի ստացած հարկածի լրջությունը գնահատելուց հետո, կարիք յեղած դեպքում անհրաժեշտ և վերախմբավորել առանձին պոստերը։ Սակայն վոչ մի պոստ չպետք է մնա բոլորովին առանց ողակի մարտիկների։ Ամեն մի պոստում պետք է լինի թեկուղ մի մարտիկ։

Հրդեհ առաջանալիս պոստը պետք է հանդցնելու միջոցներ ձեռք առնի և հրդեհի մասին անհապաղ հայտնի ողակի հրամանատարին, հաղորդելով ոռումքի գաբարիտը (1, 10, 15, 20, 50 կգ և այլն), հրդեհի վայրը (բնակարանը, նրա համար և այլն), թե ինչ և վառվում չենքում, ինչպիսի ոգնություն և անհրաժեշտ (մարտիկներ, հանգցները միջոցներ— ջուր, պաղ, կրակմարիչներ) և այլն։

Տեղ հասած ոեղերվը պարտավոր է ամեն կերպ ողնել և քուլը միջոցներն ոգտագործել հրդեհը հանգցնելու համար։

Ցեղ պայմանները քույլ տան, անհրաժեշտ և աքցանի, կարթաձողի, յեղանի և այլ միջոցներով ոռումքը հեռացնել վայրից։

ՏԱՆԻՔՈՒՄ ԾԱԳԱԾ ՀՐԻԵԿԸ ՀԱՆԳՑՆԵԼ

Յեթե հրդեհը ծագել է տանիքում, ապա ամենից առաջ հարկավոր ե կանխել տանիքի տախտակածածկի և ծպեղի վառվելու հնարավորությունը։ Յեթե տախտակածածկը և ծպեղը վառվեն, կարող ե տանիքն արագ վառվել և փուլ գալ. այլ ժամանակ անխոսափելիորեն պահանջվում է հրդեհաշիջման ավելի հզոր միջոցներով սպառազինված խմբերի ոխություն։

Տախտակածածկը, ծպեղը և այլն պետք ե հանդցնել ոռվորական միջոցով— ջրով. կամ փրփուրով, ընդփորում հրդեհաշիջումը պետք ե սկսել դեռ կրակով չընդգրկված տեղերից, վորպեսզի կրակի տարածումը դադարեցվի։

Հրդեհը հանդցնելու համար հանձնարարվում է գործադրել № 1 և № 3 կրակմարիչներ (ջրիկափրփուր և թանձրափրփուր), հիդրոպուլտ-դույլ և հիդրոպուլտ-կոստիլ, բայց յեթե ձեռքի տակ ջուր, կամ կրակմարիչներ չկան, հարկավոր ե, առանց ժամանակ կորցնելու, ողտագործել հրդեհաշիջման վորես մատչելի միջոց— ավագ, կավ և այլն։

Հանդցնելով հրդեհը, հարկավոր ե անմիջապես պարզել, թե արդյոք հրդեհի թագուն ոջախ չկա՞ այն տեղերում, վորտեղ կրակը հանդցված ե, և շենքի ծածկի տակ։ Դրա համար հարկավոր ե լինդով կամ դրա նման ուրիշ գործիքներով բաց անել կասկածելի տեղերը, առանձնապես այնպիսիները, վորտեղից թեկուղ քիչ քանակությամբ ծուխ ե բարձրանում, և հրդեհի հայտաբերված թաքուն ոջախները վողողել ջրացայտով հիդրոպուլտ-դույլի և այլ միջոցներով։

Յեթե հրձիդ ոռմբը ծակել ե տանիքածածակը և խրվել ե նրա մեջ, այդ դեպքում հարկավոր ե ամենից առաջ սառեցնել ոռմբի իրանը։ Հենց վոր ոռմբը հանդցվի կամ (յեթե չի հաջողվել այն հանդցնել) վառիրվերջանա, անհրաժեշտ ե անմիջապես բանալ այն բոլոր տեղերը, վորտեղ ծուխ ե նկատվել, առաջին հերթին այն տեղերը, վորտեղ վառվել և ոռմբը հրանյութը։ Թե հրկիզող նյութի վառվելու վայրը և թե հրդեհի քայլուն ոջախի գոտին ավելի լավ ե հանգցնել այն միջոցով, վորն ընդունված ե տվյալ տեսակի հրձիդ ոռմբի համար։

Այն դեպքում, յերբ ոռմբի այրման պրոդուկտները իրկի-

զել են վերնածածկը և հոսում են դեպի սանիքի տակ գտնվող շենքը, հրդեհը ողակի մարտիկները պետք ե բոլոր միջոցները ձեռք պանեն, վորպեսզի կահ-կարասիքի բոցավառման առաջն առնվիր։ Մամավորապես անհրաժեշտ ե ժամանակին ավազի, կամ շերտով ծածկել այն տեղերը, ուր հոսել են այրման հալած պրոդուկտները։ Այդ կմեղմացնի վայր ընկնող մասնիկների հարփածը և կապակսեցնի դրանց ցաքուցրիվ լինելը։ Յեթե այդ շենքում բոցավառվել են գործվածքները, ապա, այրվածք չստանալու համար, հարկավոր ե դրանք հանդցնել № 1, № 3 կրակմարիչներով կամ հիդրոպուլտ-կոստիլով, կանդնելով դուն մոռ՝ առանց շենքը մտնելու։

Դադարեցնելով հրահեղուկի հոսումը, անհրաժեշտ ե ամենամնարակրիխտ կերպով ստուգել ամբողջ շենքը, իր հետ ունենալով հիդրոպուլտ-դույլ։ Հրահեղուկի հիմնական զանդիքածի հոսելու տեղը պետք ե անպայման բաց անել և հանդցնել այն միջոցներով, վորոնք կիրառվում են տվյալ հրկիզող նյութերի համար։

ՍԱՆԴԻՍՎԱՆԴԻԱԿՈՒՄ ԾԱԳԱԾ ՀՐԻԵԿԸ ՀԱՆԳՑՆԵԼ

Սանդիսվանդակում ծագած հրդեհը վոչ միայն սպառնալիք ե ստեղծում վերեկի հարկերից բնակիչներին դուրս բերելու համար, այլև կարող ե առաջ բերել հրդեհի ծավալում ուղղաձիգ գծով։ Ուստի սանդիսվանդակում ծագած հրդեհը պետք ե լիկվիդացիայի յենթարկվի անմիջապես։ Տվյալ դեպքում կը բակի գեմ պայքարելու ծանրությունն ընկնում ե այն պաստերի վրա, վորոնք գտնվում են հրդեհի առաջացման կետից ցած, վորովհետև վերեկի հարկերում գտնվող հրդեհաշեջ պոստերը պարտավոր կլինեն ամենից առաջ կանգնեցնել կրակի ծավալումը դեպի սանդիսվաքի վերեկի մասը և կատարել փրկարար աշխատանքներ։

Ստորին հարկերում գտնվող հրդեհաշեջ պոստերի մարտիկները սանդիսվանդակի հրդեհը հանդցնում են ճիշտ նույն տակտիկայով, ինչ վոր սովորական հրդեհը հանդցնելու ժամանակ, վորովհետև բոցը, տաք ողը և զարերը սովորաբար գեպի վերեկ են ձգտում։ Վանդակաշենքի ծխապատումը լուրջ արդեւք չի կարող լինել։ Զուրը պետք ե մատակարարել հենց ուղղակի վառվող սատիճաններին, ճաղերին, վանդակի պատե-

թին և այլն։ Դեպի վեր բարձրանալիս հարկավոր և չառ գլույշ լինել, վորովհետև վառված աստիճանները, ճաղաշարքը և այլն կարող են մարդու ծանրությանը չդիմանալ և փուլ դալ։ Վերևի հարկերում գտնվող պոստերը ջուր պետք է մատակարարեն բնակարանների դռներից դեպի ներքեւ, սանդխավանդակը, ուստի ջրով վողողելով աստիճաններ ու պատերը։

Վորաբես սանդխավանդակի հրդեհները հանդցնելու գործիքներ՝ հանձնարարվում են հիդրոպուլտ-կոստիլլ և ջրմուղային ծորակին միացրած ջրատար շղանդը։ Երանց միջոցով հեշտությամբ կարելի յե ջրի շնթերը խիժել 10—25 մ հեռավորությամբ։

Նկատի առնելով սանդխավանդակների հրդեհները հանդցնելու բարդությունը, յերեք չե կարելի մոռանալ նահանջի ճանապարհների մասին։ Կրակի պատճառով ստորին հարկերից կտրված մարտիկը բոլոր միջոցները պետք և ձեռք առնի հրդեհը հանդցնելու համար, բայց և այսպես վոչ մի դեմքում չըպետք և մոռանա նահանջի ճանապարհը պահպանելու մասին։ Սակայն յեթե մարտիկն ստիպված ե նահանջել, ապա նա պարտավոր ե ամենակտրուկ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի նախ բնակիչներին (առաջին հերթին կանաց և յերեխաներին) դուրս բերի շենքից։ Այդ նպատակով պետք ե ունենալ փրկարար միջոցներ— պարաներ և այլն։

ՍԵՆՅԱԿԻ ՀՐԴԵՀԸ ՀԱՆԳՅՑՆԵԼԻ

Բնակարանի հրդեհը, վորն առաջացել և հրձիդ ոռումից, լուրջ վտանգ ե հանդիսանում ամբողջ տան, մանավանդ փայտաշեն տան համար։ Զե՞ վոր սովորական բնակելի սենյակը հանդիսանում ե ամենաբազմատեսակ վառունակ նյութերի կուտակում։ Այստեղ կան և՛ գործվածքներ (վարագույրներ, ծածկոցներ, հաղուստեղեն, մահակալի արգուզարդ) և՛ փայտե իրեր (աթոռներ, պահարաններ, սեղաններ, դրներ, պատուհանի շրջանակներ և այլն)։ Կրակի ներգործությանը համեմատական չափով դիմանում են միայն պատերը, սակայն հաճախ նրանք ել սակալ դիմացկուն են լինում, յեթե դրանք փայտե միջնորմներ են՝ պաստառ քաշած։

Բնակելի սենյակների այս բոլոր յուրահատուկ պայմանները պետք ե խիստ հաշվի առնել։

Յեթե տանիքածածկը և սանդխավանդակները կարելի յե

ժամանակին թեթևացնել և մաքրել ավելորդ իրերից, առանձնապես դյուկավառ նյութերից, ապա բնակելի սենյակներն այս ձեռով անվտանգ դարձնելը չի հաջողվի։ Նրանք անվիճելիորեն տմենավտանգավոր վայր են հանդիսանում կրակի համար։ Ուստի հարկերի սանդխավանդակների հարթակներում գտնված հըրդեհաշեջ պոստերը նույնական պետք ե զինված լինեն սովորական հրդեհը հանդցնող դործիքներով։

Անշուշտ այդ չի նշանակում, վոր հրձիդ ոռումիքը հանդցնելու միջոցներն այստեղ կորցնում են իրենց նշանակությունը։ Բնակառակալը, շենքում դյուրավառ նյութերի առկայությունը պահանջում ե առանձնապես արագ լիկվիդացիայի յենթարկել ոռումիք այլումը։ Բայց դրա հետ միասին հրշեջ պոստերի մարտիկները պատճեները պետք ե լավ զինված լինեն՝ սովորական հրդեհը հանդցնելու կամ, ծայրահեղ զեպքում, մինչև ողնական ուժի առեղ համելու, նրա ծավալումը կատեցնելու համար։

Փակված սենյակում հրդեհ ծագելիս հրդեհաշեջ պոստը պարտավոր ե անմիջապես գուռը կոտրել և սկսել կրակը հանդցընել, աշխատելով չի չափացնել սենյակում յեղած արժենքավոր իրերը։

Յեթե սենյակի կահ-կարասիքը վառվում ե, վոչ մի դեպքում չպետք ե լուսամուտների ապակիները ջարդել։ Զարդված լուսամուտները միայն կուժեղացնեն ողի հոսանքը, վորպիսին անխուսափելիորեն կուժեղացնի հրդեհը։ Վատլող սենյակը պետք ե հանդցնել դռնից, բայց առաջին խի հարավորության դեպքում հարկավոր ե շենքը մտնել։

Դրանից հետո անհրաժեշտ ե № 1, № 3 կրակմարիչների և հիդրոպուլտ-դույլի ողնությամբ շիջել մարմանդ այրվող փայտի կտորները, դործվածքները և այլն։

Դյուրավառ հեղուկների (նավթ, բենզին և այլն) բոյավառման դեպքում հարկավոր ե կրակը հանդցնել № 3 կրակմարիչով (թանձրափրփուր) և չոր ավազով, կամ թե այրվող տեղը ծածկել ջրով թրջված վերմակով, վերարկուվ, փալտառով և այլն։ Բոնկված նավթամթերքները հանդցնելու համար չկարելի ջուր գործածել։ Այդ միայն կուժեղացնի հրդեհը։ Նավթամթերքները ջրից թեթև են։ բարձրանալով ջրի յերեսին, նրանք դարձյալ կշարունակեն վառվել և բացի այդ՝ ջրի հետ միասին կհոսեն գեղի շենքի զանազան կողմերը և կընդարձակեն կրակի ծավալը։

Կրակմարիչի վրբրաշխթը պետք է այնպիսի ուղղությամբ սկսել, վոր մի կողմից աստիճանաբար ծածկվի վառվող ամբողջ Ամակերեսը:

Արդություն, հնարամտություն, վճռականություն— ահա թե ինչ և պահանջում պոստի մարտիկներից այս ըուրջ և վանդավոր բոպեյին:

Հրձիդ ոռմբի հասցրած հարվածը յերկու տեսակ կարող է վնել։ կամ ոռմբը վառվում է հատակի վրա, կամ թե ոռմբը՝ հրկիզել ե առաստաղը և վավել ե նրա մեջ։ Հրգեջ ողակի մարտիկների գործերու կարգը առաջին դեպքում՝ նկարապրված է վերեւում։ Յերկրորդ դեպքում ամենից առաջ անհրաժեշտ և հավաքել գորգերը, հրահեղուկ հոսելու տեղերի վրա ցանել ավագ և իսկույն ձեռնարկել հրգեհը հանդցնելուն։

Ցերե այն սենյակում, ուր հոսում է շակը (հրահեղուկը), դեռ հրդեհ չի ծագել, անհրաժեշտ է կահ-կարասիները (մանավանդ գործվածքները) թրջել ջուր շաղ տարով, դրա համար ողափործելով հիդրոպուլտ-դույլը և այլ միջոցներ։

Այն «թեորիան», վոր այրվող ոռմբի առկայության դեպքում հրգեհը հանդցնելուց առաջ անհրաժեշտ է հետախուզել հարվածի տեղը և այն, ապա հետո արդեն ձեռնարկել հրգեհաշխման, պետք ե դեն շպրտի, վորպես բացարձակապես սխալ և վնասակար թեորիա։ Հրշեջ պոստն ունենում է ընդամենը յերկու մարտիկ՝ զինված այնպիսի միջոցներով, վորոնք թեկուղ և գործուն, բայց նկատի յեն առնված միայն սկսված հրդեհը լիկիլացիայի յենթարկելու համար։ Թեկուղ և հրդեհը հանդցնելու հետ կապված, բայց այն ժամանակ սկսած գործողությունների վրա նույնիսկ վայրկյաններ վատնելը կարող է հրդեհի ծավալման պատճառ դառնալ այնպիսի չափերով, վոր կպահանջմի պրոֆեսիոնալ հրշեջ խմբերի ողնությունը, վորոնց ժամանակին հրդեհի վայրը համնելը ամեն անդամ հնարավոր չի լինում։

Հրդեհի լիկիլացիայից և հրձիդ ոռմբի բոլոր մնացորդները շենքից հեռացնելուց հետո հարկավոր ե ամենամանրակըրկիս կերպով հետախուզել շենքը և վերնածածկը, ստուգել, թե չկա՞ն արդյոք հրդեհի թաքուն ոջախներ։ Անհրաժեշտ է նաև խնամքով հետախուզել բոլոր իրերը, հարկի բոլոր սենյակները, վենակիլացիային ցանցը, ծխնելույզները և այլն։

Այրման տեղերի վերնածածկը պետք ե նիդով բաց անել և

ջրով վողողել (իսկ ավելի լավ ե վողողել հատուկ միջոցներով)։ Վերնածածկերի ծուխ արձակող ձեղքերը նույնություն պետք է բաց անել և ջրով վողողել։

Հայտնի յե, վոր կրակը կարող է թափանցել շենքի դանագան դատարկ տարածությունները և ուրիշ տեղերում նոր հրդեհ առաջացնել։ Այդ բանը ժամանակին հայտաբերելու համար անհրաժեշտ է հրդեհից հետո 6—12 ժամվա ընթացքում ամենախիստ դիտողություն անցկացնել այն տեղամասում, վորոտեղ հրդեհ եր ծագել, առանձնապես տվյալ՝ հարկի և նրան հարկից հարկերի վենակիլացիային ցանցի ուղղությամբ։ Ծխացող տեղ հայտաբերելիս հարկավոր ե անմիջապես բաց անել և հանդցնել այն։

Տան ՀՈՊ-ի պետը պարտավոր է իսկույն, հրդեհի վերաբերյալ տեղեկություն ստանալուն պես, այդ մասին իրազեկ դարձնել տեղական հրշեջ խմբին, վորն սպասարկում է այն ռայոնը, վորտեղ գտնվում է հրդեհվող տունը։ Նա պետք է ցույց տա հասցեն, տան համարը, պետք ե հաղորդի, թե ի՞նչն է վառվում, թե վերեկի հարկերի բնակիչները կրակի պատճառով կարվա՞ծ են ստորին հարկերից, թե վոչ։

Հրշեջ ողակի հրամանատարը պարտավոր է ողակի մնացած մարտիկների հետ միասին անմիջապես հասնել հրդեհի վայրը, վերցնելով իր հետ հրդեհաշխման միջոցներ։ Կատարելով թուցիկ հետախուզություն, բայց վոչ մի դեպքում չընդհատելով հրդեհաշխման այն աշխատանքները, վորոնք կատարվում են պոստի կողմից, նա պետք ե զեկավարի հրդեհաշխմումը և հրդեհի վայրում համախմբի հրդեհաշխման պահեստի միջոցները։


Դրությունը լուրջ լինելու դեպքում նա պարտավոր է այդ մասին իրազեկ դարձնել տան ՀՈՊ-ի պետին և ողնություն պահանջել հարկան աների հրշեջ ողակներից։

Հենց վոր պրոֆեսիոնալ հրշեջ խումբը ժամանի, տան ՀՈՊ-ի պետը պետք ե այս խմբի պետին ցույց տա վառվող տեղը, հաղորդելով նրան հրդեհի մոտավոր տարածությունը, ինչը պես նաև այրման ոջախին մոտենալու տեղերը, հրդեհային ջրհոների տեղադրությունը և այլն։

Հրշեջ ողակի հրամանատարը և տան ՀՈՊ-ի պետը պետք է ձեռք առնեն իրկարար աշխատանքի կազմակերպման բոլոր

միջները (այդ աշխատանքը կատարում են այն մարդիկ, վորոնք աղատ են հրդեհը հանդցնելուց) :

Պարանի (Հիմնական միջոց) միջոցով փրկելու համար, ամենից ավելի լավ և գրանից «փրկարար բազկաթռ» ոլատրաստել (նկ. 11): Դրա համար պարանի վորով ծայրի մասը յերկտակ ծալում են, թևերի տարածվելու յերկարությամբ (1): Պարանի այս ձևով ծալված ծայրը վերցնում են ձախ ձեռքը, վորի չնորհիվ ստացվում է մի ողակ, վորը ներքեց կլորացած և (2): Ապա աջ ձեռքի բթամատով և յուցամատով բռնում



Նկ. 12

պարանի ողակը և պարանը ողակածե զցում այդ մատների վրա (3): Կազմված յերկու փոքր ողակները բռնում են ձախ ձեռքով և միաժամանակ վորում այնպիսի ձեռվ, վոր մեծ ողակի պարանի ծայրերը հեծնեն իրար վրա (4): Այնուհետև պարանի յերկորդ (հեռավոր) ծայրը վերցնում են աջ ձեռքով, ձախից-աջ պտտում առաջն ծայրի շուրջը (5) և անցկացնում ձախ ձեռքով բռնած վերեկի փոքր ողակների մեջ (6): Ստացված հանդույցը բռնուում է պարանը, տալով նրան թվանշանի (7)—«փրկարար բազկաթռով» ձև:

Յետ ու առաջ շարժելով կարելի յե ալելացնել կամ պակւեցնել ութի յերկու ողակներից մորեւ մեկը:

«Փրկարար բազկաթռուն» ողտառործելիս ստորին մեծ ողակի մեջ մտցնում են վոտքերը, իսկ վերեկի փոքր ողակը գլխի վրայից (յերեսի կողմից) հաղցնում են փրկվողի պարանոցին: Ստորին ողակն ընկնում է նստելատեղի տակ, վերևինը—պարանոցի վրա, իսկ ութի ամբացնող հանգույցը՝ համարյակիծքի վրա: Հանգույցից հեռանում է պարանի կարծ և աղատ մնացած ծայրը: Նրանով շրջապատում են փրկվողի դոտկատեղը և հանդույցով կապում նրա կրծքին:

Փրկվողը լուսամուտից ցած և իջնում նստած դրությամբ: Փրկողը ձեռնոցներ հաղած յերկու ձեռքով բռնում է պարանը, նախորոք պարանը յերկու անդամ անցկացնելով փրկարար գոտու կարարինի վրայից:

Հրդեհաշինական սանդուխը միշտ պետք է սարքին լինի և զանազան հնոտիներով ծանրաբեռնված չպետք է լինի:

V. ՏՈՒՆԸ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Տունը հակառային պաշտպանության համար նախապատրաստելու և հակառակորդի ողային հարձակման ժամանակ հակառային և հակաքիմիսական պաշտպանության վերաբերյալ ամբողջ աշխատանքը զեկավարելու ոլատասխանառվությունն ընկնում է տնային կառավարիչի վրա, վորը միաժամանակ հանդիսանում է նաև տան շնորհի պետը:

Տան հակառային պաշտպանությունն ամուհովելու համար կազմակերպվում է ինքնապաշտպանության խմբակ, գորը բաժանվում և միանդամայն վորոշակի փունկցիաներ ունեցող վեց ողակի: Ողակներից մեկը կոչվում է կապի և դիտնդության ողակի: Ինքնապաշտպանության խմբակի պետը այս ողակն ողտազակ: Ինքնապաշտպանության խմբակի պետը այս ողակն ողտազակի: Եղանակը ողակներին զեկավարելու, ինչպես նաև գործում և մնացած ողակներին զեկավարելու, ինչպես տեղական շնորհի տեղամասի և ինքնապաշտպանության հարեւնի խմբակների հետ կապ պահպանելու համար: Բացի գրանից, կապի ողակը կազմակերպում է դիտող պոստ, վորը խմբակի կապի ողակը կազմակերպում է այն բոլորի մասին, ինչ տեղի յե ունեցել տան տեղատորիայում, ողային հարձակման ժամանակ: Այդ տան տեղատորիայում, ողային հարձակման ժամանակ:

իսկ ողակը տան բնակիչներին ազդարարում և ողային, քի-
միական և հրդեհային վտանգի մասին:

Խմբակի սպասարկած տերիտորիայում կարգը պահպանելու
համար նրա կաղմի մեջ կա կարգապահական ողակ: Այս ողա-
կը հերթապահություն և անում կարգապահության պոստերում,
վորոնք դրվում են մուտքի դռների, դարպասների մոտ և մարդ-
կանց ապաստարաններում:

Բացի դրանից, ողակի մարտիկները հետևում են, վոր
տան տերիտորիայում ամենուրեք պահպանվի լուսաքողարկման
դիսցիլինան, մարդկանց ուղարկում են ապաստարաններ,
հրդեհի ժամանակ մարդկանց դուրս են բերում վառվող շեն-
քերից, պահպանում են իրենց շենքերից դուրս յեկած քաղաքա-
ցիների դույքը կամ վառվող շենքերից դուրս բերված դույքը,
պահպանում և շրջապատում են հրդեհի ոջախները և այլն:

Տան տերիտորիայում ծագած հրդեհը հանդցնում է հրշեց
ողակը: Առաջացած հրդեհները յերեան բերելու և արագու-
թյամբ հանդցնելու համար հրշեց ողակը պոստեր և դնում տա-
նիքների մոտ, սանդիխավանդակներում և հրդեհի տեսակետից
ամենավտանգավոր տեղերում: Անհրաժեշտության դեպքում
հրդեհը հանդցնելու դործին մասնակից և արվում ինքնապաշտ-
պանության խմբակի ամբողջ կաղմը և տան աշխատունակ բնա-
կիչները: Հրշեց ողակն ողնում և այն հրդեհաշեց խմբերին,
վորոնք յեկել են մեծ հրդեհը հանդցնելու:

Տան տերիտորիայում գաղահանման աշխատանքները կա-
տարում և ֆիմիական ողակը: Յեթե հակառակորդը դործադրում
և կայուն թունավոր նյութեր, քիմիական ողակը հետախուզում
և տեղադասերը, վարակումը նշավորում և շրջապատման նշան-
ներով և ձեռնարկում տան տերիտորայի գաղահանման աշխա-
տանքներին: Առաջին հերթին գաղահանմում են պայթած քի-
միական ավիաումբերից առաջացած փոսերը: Անհրաժեշտու-
թյան դեպքում ողակն անցնելու ճանապարհներ և շինում՝
բնակչությանը վարակված ռայոնից դուրս բերելու համար:
Հենց վոր տեղամասային գաղահանման խումբը վարակված ռա-
յոն և գալիս, ողակը մասնակցում է նրա աշխատանքին:

Ողային հարձակման ժամանակ տուժածներին առաջին ան-
հետաձգելի ողնություն ցույց է տալիս սանիտարական ողակը:
Այս ողակի մարտիկները հերթապահություն են անում սանի-
տարական կայանում և սանիտարական պոստերում, տուժած-

ներին դուրս են բերում վարակման ոջախներից, տուժածներին
ուղարկում են լվացման կայաններ և ակտիվորեն մասնակցութ-
են վարակման ոջախը յեկած բժշկա-սանիտարական խմբերի
աշխատանքին:

Բացի վերոհիշյալ հինգ ողակից, ինքնապաշտպանության
խմբակի կաղմում ցանկալի յեւ ունենալ հատուկ սեխնիկական
(ավարիային-վերականգնման) ողակ ողային հարձակման ժամա-
նակ վնասված ջրմուղը, կոյուղին, եկեկտրական ցանցն ամենա-
արագ կերպով վերանորոգելու համար: Այս ողակում վորպես
մարտիկները ընդունվում են թե՛ աշխատող և թե՛ տան մեջ բը-
նակվող ջրմուղագործներ, մոնայորներ և փականագործներ:

Այսպիսով, ինքնապաշտպանության խմբակները տնիերի
ՀՌՊ-ի կաղմակերպման հիմնական կորիզն են հանդիսանում:
Նրանք ՀՌՊ-ի մյուս բոլոր կաղմերից ամենից ավելի ընդունակ
են ողնության գալու աղքաբնակչությանը՝ հակառակորդի ողա-
յին հարձակման դեպքում:

Ինքնապաշտպանության մարտունակ խմբի գոյությունը վոչ
թե բացառում, այլ, ընդհակառակը, վորոշում և ամբողջ աղ-
քաբնակչությանը հակառակության պաշտպանության համար նա-
խապատրաստելու անհրաժեշտությունը: Ողային հարձակման
հետևանքները վերացնելիս տան բնակիչները կներդրակվեն վա-
րակման ոջախներում կատարվող աշխատանքներին, որինակ,
հրդեհաշվիմանը, անցկանենը ու քանդվածքները կարգի բերե-
լուն և այլն:

Ինքնապաշտպանության խմբակի մարտիկները պետք է
անմիջական մասնակցություն ունենան տան բնակիչներին այդ
աշխատանքի համար նախապատրաստելու գործում:

Ինքնապաշտպանության խմբակը տան ՀՌՊ-ի պետի ղեկա-
վարությամբ կատարում է նաև ամբողջությամբ վերցրած տան:
ՀՌՊ-ի նախապատրաստության վողջ դործնական աշխատանքը:

Ինքնապաշտպանության խմբակ են մտնում տան աշխա-
տունակ բոլոր բնակիչները, անկախ նրանց աշխատանքի վայ-
րից: Խմբակի կմախքն են հանդիսանում շարունակ տանը դը-
նվող բնակիչները՝ դռնապահները, տնային տնտեսուհիները,
տնային ծառայողները և ուրիշները:

Ինքնապաշտպանության խմբակի պետը հանդիսանում է
տան ՀՌՊ-ի պետի տեղակալ:

Մասսայական կուսակցական-քաղաքական աշխատանքը ղե-

կավարելու և մարտական աշխատանքը քաղաքականապես ապահովելու համար նշանակվում է քաղղեկ:

Ամբակի յուրաքանչյուր ողակին զիմապորում և հրամանատարը:

Բնակելի տան հակահրդեհային պաշտպանության կազմակերպումն ամենալուրջ գործ է, այդ գործն արհամարհելը կարող է պատճառ դառնալ նյութական մեծ վիճակ և մարդկային զուհերի:

Հրշեց ողակի հիմնական խնդիրն եւ՝ լիկիդացիայի յինքարկել իրդեհը նրա զարգացման առաջին ստադիայում:

Նախազդուշական միջոցառումները, թերուեափիկական ուսուցումը, գործնական պարապմունքները, պոստեր նշանակելը, ողակի աշխատանքը հրձիդ ավիտումբերը և նրանց առաջացրած հրդեհները հանդցնելու ասողարեղում—այս բոլորը պետք է յենթարկվեն այս խնդրին:

Ինքնաշխատինքյան հասկանայի յէ, վոր յեթի անմիջապես չձեռնարկվի հրդեհը հանդցնելուն, ապա նա կուժեղանա, և այն ժամանակ նրա լիկիդացիայի համար մեծ ջանք կազմանձվի: Թոկ հրդեհի ոջախների մասսայաբար առաջանալու դեպքում հապաղումը միանդամայն անթույլատրելի յէ:

Կարծել, թե հրդեհի բոլոր բաղմաթիվ ոջախները կարող են ժամանակին լիկիդացիայի յենթարկվել քաղաքային հրշեց խմբերի կողմից—նշանակում է բացահայտ սխալի մեջ ընկնել: Ողային հարձակման դեպքում կարող են առաջանալ հաղարախոր հրդեհներ, վորոնց հաղթահարելու հնարավորություն չեն ունենա միմիայն պրոֆեսիոնալ հրշեց խմբերը:

Հարկավոր է վորոշակի պարզաբանել, վոր բնակելի տների հրդեհների դեմ պայքարելու ողարտականությունն ընկնում և ինքնաշխատպանության խմբակների հրշեց ողակների ուսերի վրա, այսինքն հենց իրենց՝ բնակիչների վրա: Քաղաքային հրդեհաշեց խմբերը կրակից առաջին հերթին պաշտպանելու յեն ամենակարեւը ոբյեկտները (գործարանները, ֆաբրիկաները, աերոդրոմները, հիմնադանոցները և այլն):

Անհրաժեշտ է նաև վորոշակի պարզաբանել, վոր հակահրեցային սխտեմը ճիշտ կազմակերպելու, բոլոր պրոֆիլակտիկ միջոցառումներն անցկացնելու, հրդեհաշեց պոստերի և վորջ հրշեց ողակի վճռական և անձնվեր աշխատանքի դեպքում դժ-

վար չե արագ լիկիդացիայի յենթարկել կրակը: Համենայն դեպս այս խնդիրը լիովին իրագործելի յէ:

Տան հակահրդեհային պաշտպանության կազմակերպումը հետեւյալն է:

ա) համալրել հրշեց ողակը և ողակի հրամանատար նշանակել:

բ) մշակել հակահրդեհային պլոֆիլակտիկ միջոցառումներ և խաղաղ ժամանակ ու հակառակորդի ողային հարձակման ժամանակաշրջանում հրդեհների դեմ պայքարելու միջոցների պլանները:

գ) ողակը, պոստերը և բնակարաններն ապահովել հրդեհաշեցման միջոցներով:

դ) կրակի և հրձիկ ողումբերի դեմ պայքարելու վերաբերյալ տեսական և զործնական պարապմունքներ անցկացնել:

Հիշելով, վոր ոմբակոծության ժամանակ այս կամ այն ողակի առանձին մարտիկներ կարող են չարքեց դուրս գալ վիրավորվելու, այրվածք ստանալու կամ թունավորվելու պատճառով, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վոր ինքնապաշտպանության խմբակի յուրաքանչյուր ողակի մարտիկ դոնե տարրական հմտություններ ունենա մյուս ողակներում, այդ թվում նաև հրշեց ողակում աշխատելու ասղարեղում: Այս ուսուին չպետք է մոռանա տան ՀՊԳ-ի վոչ մի պետ:

Հրշեց ողակի աշխատանքի համար պատասխանառու յէ նրա հրամանատարը:

Դեռ խաղաղ ժամանակ հրշեց ողակի հրամանատարը կառ և հաստատում քաղաքային հրդեհաշեց խմբերի հետ, վորն սպասարկում է այն ուայոնը, վորտեղ գանվում է տվյալ տուենը, կազմակերպում և համալրում է իր ողակը թե՛ մարտիկներով և թե՛ հակահրդեհային անհրաժեշտ գործիքներով, դեկալարում է հակահրդեհային բոլոր պրոֆիլակտիկ միջոցառումները տանեանցկացնելու գործը, կազմակերպում և կրակը հանդցնելու վերաբերյալ գործնական և տեսական պարապմունքներ, ստուգում և հակահրդեհային միջոցների պահպանումը տան բնակիչների

1 Այս պլաններով պետք է նախառեսվեն տան բոլոր զենքերի և հակահրդեհային գույքի պարբերական ստուգումներ, ինչպես նաև հակահրդեհային պրոպագանդայի միջոցառումները (գասախոսություններ, զրույցներ տան բնակիչների հետ, կինոֆիլմերի և գիտադիտիվների ցուցադրում և այլն)

կողմից և նրանց մեջ բացատրական աշխատանք և տանում հրդեհի գեմ պայքարելու հարցերի շուրջը:

Նա մարտիկների մեջ զաստիարակում և կարդապահություն, վճռականություն, համարձակություն և անձնվիրություն, մշակում և իր աշխատանքի և ողակի աշխատանքի պլան «սպառալից դրության» և «ողային տաղնապի» ժամանակ:

Նրա պարտականությունների մեջ մտնում են նաև՝

ա) կաղմել ողակի անձնակալմիքի ցուցակը, ճշտել տանից դուրս իր ունեցած աշխատանքի որերը և տեղողությունները և իմանալ, թե ում վրա և ի՞նչ ժամանակ նա կարող է հույս դնել.

բ) լիակատար հաշվի առնել հրդեհաշվելման գործիքները, դաստիլուրել գործիքները տան մեջ, դրանք ամրացնել մարտիկներին՝ մարտական պատշաճ պատրաստության մեջ պահելու համար.

գ) կաղմել մարտական կարդացույց՝ «ողային տաղնապի» ժամանակի համար:

դ) կաղմակերպել հակահրդեհային պոստեր.

ե) տան յուրաքանչյուր հրշեջ պոստի համար կաղմել հրահանդնել:

Հրշեջ ողակի շարքային կազմի պատրաստությունը ողեալք և անցկացնել ԽՍՀՄ Պաշտպանական կենտրոնական խորհրդի 40 ժամյա ծրագրով:

Խաղաղ ժամանակ տունը հակահրդեհային պաշտպանության համար նախարարաստելու նպատակով հարկավոր և մարտիկներին բաժանել հրդեհաշեջ պոստերի միջև «ողային տաղնապի» աղդանշանի գեղաքում, ողակից մարտիկներ առանձնացնել պարբերաբար հետեւելու համար վառելու յնիթակա հեղուկների և այլ նյութերի պահպանման՝ ըստ բնակարանների խմբի՝ ըստ հարկի, պողեղղի (այդ կողմի բնակիչներին վարժեցնելու վորոշակի կարգապահության, վորն անհրաժեշտ է կրակի դեմ հաջող պայքարելու համար):

Անհրաժեշտ նախորոք ճեղք բերել հրդեհ հանգնելու միջոցներ և մատակարարել բնակարաններին (իրակմարիչներ, արկղներ, ավագով լիք պարկեր և այլն):

Յերբ մենք յուրաքանչյուր բնակարանին մատակարարենք կրակմարող միջոցներ, բնակիչները կիսարողանան դրանք գործադրել սովորական հրդեհների գեղաքում (պրիմուսներից, կեծաղերից կամ առաջարկած համար):

բոսինկաներից և այլն), կկարողանան իրենք պայքարել կրակի գեմ : Այս մի կողմից, իսկ մյուս կողմից՝ հրձիդ ոռութերից առաջացած հրդեհնը պահանջում է ունենալ բավական քանակությամբ կրակ հանդցնող միջոցներ, վորոնց ճեղք բերելը խաղաղ ժամանակ և հեշտ է, և տան բյուջեի վրա չի ազդում :

Սրան զուգընթաց խաղաղ ժամանակ անհրաժեշտ է տան մեջ կիրառել հետեւյալ պրոֆիլակտիկ միջոցառումները, տանիքները, անցքերը, սանդխտավանդակները մաքրել ամեն տեսակի խլամ նյութերից, փայտե շինվածքները, կառուցման դետալները հրակայուն դարձնել և այլն¹:

Ստեղծել զանազան պահեստի մասերի և գործիքների (ծորակների, փակերի, գազի բանալիների և այլն) տեխնիկական ռեզերվ: Ռումբերից և փլուզումներից վնասված ջրագաղախողովակները, ելեկտրալարերը վերանորոգելու համար այսպիսի ռեզերվի կարիքն անպայման շատ դգալի յե ողային հարձակման ժամանակ:

Ողակի մարտիկներին, ինչպես նաև տնային տնաեսուհիներին, տնային ծառայողներին, դռնապաններին գործնականապես սովորեցնել, թե ինչպես պետք է վարչել հակահրդեհային միջոցների հետ և ինչպես խնամել դրանք:

Տեսական պարագմունքներ կաղմակերպել՝ հրդեհների, հրդեհիչ միջոցների գեմ պայքարելու վերաբերյալ և ծանոթացնել հակահրդեհային միջոցների յուրաքանչյուր տեսակի կառուցվածքի և գերի հետ: Առանց տան բնակիչներին նպաստելու, առանց հակահրդեհային պաշտպանության հարցերը պարզաբանելու անհնար և հույս զնել պատերազմի ժամանակ հրդեհների գեմ մղվող պայքարի հաջողության վրա:

Կազմել հրդեհային ծորակների տեղադրության և խողովակների յերկարության ճիշտ ցուցակ, վորպեսզի հրդեհնը հանդցնելու ժամանակ ուղարձ րոպեյին հնարավոր վիճի խկույն վորոշել, թե վո'ր կետից կարելի յե և պետք է վերցնել ջուրը:

Կազմել ջրմուղային ծորակների, զաղատար խողովակների և ելեկտրահաղորդիչ գծերի տեղադրության սիեմա: Այսպիսի սիեման կողմի արագ վորոշելու, թե, որինակ, տան վո'ր մասն

¹ Պրոֆիլակտիկ միջոցառումների և բնակելի տների ու նրանց հարակից շնոքերի պահպանման մասին խաղաղ ժամանակ՝ մանրամասնորեն կառվ քիչ հետո:

տուանց ջրի կմնա ջրմուղային ցանցի խանդարման դեպքում և այլն:

Կազմել ծորակների և ջրմուղի գաղատար գծերի ընդհանուր և մասնակի միացման (անջատման) անջատիչների ելեկտրառժային տեղեկայանքի (ջեռուցման սխառեմի մոտոռներ և այն) և լուսավորության գծերի գտնված տեղերի ցուցակ, վորովդեմու «ողային տանգնապի» մոմենտին կարող ե պատահել, վոր կարիք լինի լույսն անջատելու, իսկ յերբեմն ել ջուր մատակարարող սխառեմը, ել չխոսելով արդեն դաշն անպայման անջատելու մասին:

Հաշվի առնել տան մոտ գտնված բոլոր հրդեհային ջրհորները: Քաղաքային հրդեհաշեջ խմբերի ժամանելու դեպքում տան լիազորն անձամբ կամ հրշեջ ողակի մարտիկը ողարտավոր և ցույց տալ, թէ վորտեղ են գտնվում հրդեհային ջրհորները: Յեթե տոմն իր արամաղբության տակ ունի ստենդեր և հրդեհաշիջական շանգներ, ապա հրդեհի ժամանակ այդ ջրհորները կարիք յեղած դեպքում պետք ե ողարտավործին նաև ինքառաշտպանության խմբակի հրշեջ ողակի կողմից:

Յերեան հանել հրդեհի տեսակետից տան ամենավտանդավոր տեղերը և հատուել միջոցներ ձեռք առնել դրանք հրդեհից պաշտպանելու համար: Առանձին աներում դեռ մնացել են վայտե սանդուխներ, վորոնք յեթե վասկեն, կկտրվի վերևի հարկերի բնակիչների եվակուացիայի հանապարհը: Յուրաքանչյուր այսպիսի տան մեջ անհրաժեշտ ե առաջուց նախատեսել միրկության հատուկ միջոցներ:

Ստուգել վենավելյացիոն սողնակների սարքին լինելը: Շենքում հրդեհ ծագելու դեպքում կրակը հեշտ կարող ե վենավելյացիոն գծերի միջոցով թափանցել ամենահետավոր տեղերը:

Առանձնապես կարեռ ե ողանցքի խուփերը լավ դրության մեջ պահել բազմահարկ աներում, վորտեղ կրակը ուղղաձիր գծով կարող ե հարկից հարկ տարածվել:

Ապակեպատել տանիքի ձեղնալուսամուտները և միջոցներ ձեռք առնել, վորսեղի բրանդմասուերների (կղմինդրե կրաքապաշտպան հիմնական պատեր, վորոնք տունը բաժանում են մի շարք անկախ—անջատ մասերի) դոներն ամուր վասկվեն: Տանիքային լուսամուտների ապակեհածակ շրջանակներն արգելք են հանդիսանում ողի ներհոսմանը՝ դեպք տանիքում առաջացած հրդեհի վայրը, իսկ կրակապաշտպան պատերի տ-

մուր և հրակայուն դռները թույլ չեն տալիս, վոր կրակը հարեան տները թափանցի:

Զուրը մոտեցնել տանիքաշենքին և կրակին ամենից ավելի յենթակա տեղերին: Ջրմուղային գծերից ջուր մատակարարեն անպայման ավելի եֆեկտիվ և ուղիղութե, քան այն դույլով բերելը: Այդ նպատակի համար կարելի յէ, և մեծ հաջողությամբ, ողարտավործել սովորական ջրցան խողովակ, վոր գործածում են գոնապաները՝ վողոցները ջրջրելու համար: Այս դեպքում բավական կլինի ջրմուղային դիօը հասցնել մինչև տանիքի յելքի մոտ դանալով հարթակը:

Տան բնակիչներին մատակարարել պլակատներ և թույլիկներ, վորոնք խորհուրդներ են տալիս թե՛ կենցաղային պատճառներից և թե՛ հրձիդ ուսումբերից առաջացած հրդեհների գեմ պայքարելու մասին:

Անցկացնել վարժական պարագմունքներ և տաղնապներ: Վարժական պարագմունքներն ողակի աշխատանքի անխղելի մասն են հանդիսանում: Տաղնապների կազմակերպումը պետք ե համաձայնեցնել տան ՀՊՊ-ի պետի հետ:

Մարտիկներին տալ թե՞-ից ինքն իրեն պաշտպանելու և ինչպես կրակից, այնպես ել թե՞-ից տուժածներին անհապաղ ողոնություն ցույց տալու ունակություններ: Զի կարելի մոռանալ, վոր յերեւն ստիպված են լինում հրդեհը հանցնել թե՞-ից ժունավորված մթնոլորտում:

Անհնարին չեն ամեն տեսակի գժբախտ պատահարներ, յերբ պահանջվում ե անհետաձդելի ողնություն, յերբ չի կարելի այդ ողոնությունը հատածդել մինչև սանիտարական ողակի մարտիկների գալը:

Այս բոլոր միջոցառումների կատարման աստիճանից կախում կունենա հրձիդ ուսումբերից առաջացած հրդեհների գեմ պայքարելու հաջողությունը:

Ինքնին հասկանալի յէ, վոր սրանով չի կարող սահմանափակվել հակահրդեհային պաշտպանության համար բնակելի տան պատրաստ լինելու ստուգումը: Ամեն մի տուն ունի իր առանձնահատկությունները, վորոնք պետք ե խստիվ հաշվի առնվեն, և դրանց համապատասխան՝ պետք ե անհրաժեշտ միջոցներ կիրառել:

«Ողային տաղնապ» աղդանշան տրվելուն պես անհրաժեշտ մի անդամ ևս մանրակրկիտ կերպով ստուգել տան պատրաս-

տականությունը հակահրդեհային պաշտպանության։ Իսկ հրշեջ ողակի մարտիկներն այս աղդանչանի համաձայն պարտավոր նն անհապաղ հավաքվել իրենց կայսեներում (հավաքման վայրը նախորդ պայմանավորված պետք ե լինի), իսկ հրդեհաշեջ պոստերին ամրացված անձնավորությունները պարտավոր են անմիջապես դրավել այդ պոստերը։

Ողակի հրամանատարը պարտավոր ե ստուգել, թե արդյուք բոլո՞ր մարտիկներն են դրավել իրենց պոստերը։

Տան մեջ հրդեհ առաջանալու գեղքում յուրաքանչյուրը մարտիկի ամրող եներգիան, վճռականությունը, ամբողջ լսելը ու միտքը պետք ե յենթարկվեն մի խնդրի. բոլոր ուժերով և միջոցներով անմիջապես հանդցնել հրդեհի ոջախները։

Ռումբեր և հրդեհներ հանդցնելու յեղանակները չպետք ե են կարող միշտ ստանդարտ լինել։ Պայմանները տարբեր են լինում։ Դրանք կամ նպաստում են հրդեհի զարդացմանը, կամ, ընդհակառակը, նպաստում են կրակի մեկուսացմանը։ Այս պայմաններին պետք ե կարողանալ արագ հարմարվել։

Գերեզման հատուկ զլուխներում բերված ելին միայն զանազան ոբյեկտներ հանդցնելու վերաբերյալ ընդհանուր կանոնները։ Ողակի աշխատանքների պլանում պետք ե ամենալուրջ ուշադրություն դարձվի մարտիկների տեսական և առանձնապես դրուժական նախապատրաստության վրա՝ հրդեհը հանդցնելու ամենաբազմապիսի պայմանների, զանազան կոմբինացիաների համաձայն (նախատեսել առավելագույն քանակությամբ հնարավոր վարիանտներ)։

Պարապմունքները ունկնդիրներին պարզ պատկերացում պետք ե տան։

Մարբեր նյութերի այրման պրոցեսի մասին (բոցավառման կետը, ջերմապոյացում, բոցով և անրոց այրում),

Հանդցնելու սկզբունքների մասին (մեկուսացում արտաքին միջավայրից և սառեցում),

Հրդեհիչ նյութերի, հրձիդ ռումբերի և նրանց այրման, նրանց տեսակների մասին, ըստվորում, լուրջ ուշադրություն պետք ե դարձնել հրդեհիչ նյութերի այրման բնույթի, վերջիններս գույնից և բոցի լուսարձակումից ճանաչելու ձեւերի վրա, փայտի, մետաղի, բետոնի, ավաղի, կղմինտրի, կամի և այլ շինայութերի վրա հրդեհիչ նյութերի ունեցած ներդորժության աստիճանի մասին։

Բացի դրանից, հարկավոր ե լայն չափով պարզաբանել հրձիդ ռումբերը և հրդեհները հանդցնելու մեթոդները և տակտիկան այն մոմենտին, յերբ հրդեհն արդեն սկսվել է, իսկ ռումբերը դեռ շարունակում են այրվել։

Վերին աստիճանի անհրաժեշտ և փորձեր կատարել՝ այրելու փայտի այնպիսի նմուշներ, վորոնք կրակից չեն պաշտպանված և վորոնք պաշտպանված են (փայտեղենը ներկելու և կրակից պաշտպանող ամենամատչելի միջոցներով ծեփելու միջոցով)։ անհրաժեշտ ե նաև հիմնովին ծանոթանալ հրշեջ գործիքների կառուցվածքներն և գործողությանը, նրանց սարքմանը և խնամելու կանոններին, ինչպես նաև հրդեհային ոժանդակ գործիքների (կացին, նիդ) հետ վերաբերվելու կանոններին հատակը բաց անելիս և այլն։

Հրշեջ ողակի գործնական պարապմունքի նպատակն ե ամենից առաջ տան մեջ անցկացնել նախազդուչական հակահրդեհային միջոցառումներ և ձեւեր ու կանոններ մշակել հրդեհի ստանձին ոջախները հանդցնելու գործում։

Կրակի ոջախների վարժական շիջումը պետք ե անցկացնել չենքերից հետո (150—200 մ), ըստ վորում անհրաժեշտ ե ունենալ կրակմարդիքների լրացուցիչ պաշար (առնվազն 5 հատ) և ջրմուղից ջուրը մոտեցնել, այդ նպատակի համար գործադրելով դուրս ձգող շանդուներ։

Տան մեջ հակահրդեհային պրոֆիլակտիկ միջոցառումները պետք ե անցկացվեն ամենամեծ ինսամքով։ Հիմնականն այսուեղան ավելորդ, անպետք նյութերից ազատելու, գույքի անթույլատրելի կուտակում վերացնելը, վառունակ նյութերին հրակայունաթյուն տան և։

Սանդիսավանդակներն ու անցքերը դեռ ու դեն թափթփված իրերով, տախտակներով և այլնով ծանրաբեռնված լինելը բացարար կանուրադառնա բնակիչների եվլակուցիայի վրա, արդեկը կհանդիսանա հրդեհաշեջման համար, կղմվարացնի նրան մոտենալը և հանդցնող միջոցներ մոտ բերելը։ Բացի դրանից՝ տանիքածածկը և սանդիսավանդակները կրակից լուրջ կերպով պաշտպանելու համար անհրաժեշտ և դրանց հրակայուն դարձնելու միջոցներ ձեռք առնել։

Բոցի հետ անմիջական չփումից մեկուսացված փայտեղենն ընդունակ է յերկար ժամանակ դիմադրելու նրա ներդորժությանը։ Յեզ թեև կրակի հետ չփում տեղում մեկուսացված փայ-

տեղենը մասամբ ե քայլայվում (ածխանում), բայց և այնպէս նրա այրումը չի ծավալվում ամբողջ մակերեսութիւն վրա: Հետեաբար, վառվող հրձիկ ոռումբն այսպիսի վայտեղեն այրում ե շատ քիչ տարածությամբ, 2 մետրից վոչ ավելի շառավիղով: Այդ ունի նաև մի ուրիշ դրական կողմ ևս, այն ե՝ սպակասում ե հանգսնող նյութերի ծախօր:

Փայտը հրակայուն դարձնելու համար գոյություն ունենալով այսպիսի ծեփեր, ներկեր և տողորող նյութեր: Բայտ վորում այստեղ պարտապիր չե գործարանային արտադրության պրոդուկցիան (բացի տողորիչներից):

Հաջողությամբ կարող են գործադրվել հանրամատչելի միջներ, որինակ, տան կառուցվածքների խոշոր դեսալների (դերանների) և հատակի համար կրա-ավաղախառն, ծծմբուտալկալիական և հարզախառն կավի ծեփեր:

Դրանցից առաջնը չորանալուց հետո առաջ ե բերում առուր կեղե, վորը բավականաչափ դիմացկուն և կրակի ներդրության գեմ: Նա պատրաստվում ե այսպես. 35 ծավալ (լիտր) գետի մանր ավաղ խառնում են կրային շաղախի հետ և խառնուրդը պատրաստ ե:

Այս ծեփը մեծ քանակությամբ չպետք ե պատրաստել, վորովհետեւ արագությամբ կարծրանում ե: Դրանցից պետք ե պատրաստել այնքան, վորքան պահանջվում ե աշխատանքի համար: Յեթե շաղախը շատ պինդ ե ստացվում, ապա անհրաժեշտ ե այն ջրով խառնել: Ավաղից և կրի խմորից պատրաստված շաղախը վայտի վրա պետք ե քսել վրձինով կամ մասներուիլ, վոր կառուցողները գործածում են կղմինդր շարեցիս:

Շերտի հաստությունը 2—3 մմ-ից ավելի չպիտի լինի. հակառակ դեպքում տան վերնածածկը չափից ավելի կծանրանա, վորից կարող ե խախտվել գերանների և տանիքի տախտակածկի դիմացկունությունը:

Այս ծեփը ջրակայուն ե:

Նա չորանում ե միջին հաշվով 5—6 որից:

